ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1005-Ա/2 **«07» հունիս 2024 թ.**

«ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2024» ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» 3-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Կազմակերպել «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» մրցույթ (այսուհետ՝ մրցույթ):

2. Հաստատել՝

1) մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«07» հունիս 2024 թ.
N 1005-Ա/2 հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2024» ՄՐՑՈՒՅԹԻ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն հայտարարում է «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» **մրցույթ**:

Մրցույթն ուղղված է Հայաստանի Հանրապետության գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող հաստատությունների ասպիրանտների և հայցորդների մասնագիտական որակավորման բարձրացմանը:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման համակարգով (https://grants.hesc.am)՝ մինչև 2024 թվականի օգոստոսի 16-ը ներառյալ: Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին:

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.hesc.am:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության հետազոտական ծրագրերի բաժնից՝ զանգահարելով 010-210-140 (*113):

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«07» հունիս 2024 թ.
N 1005-Ա/2 հրամանի

ՀՐԱՎԵՐ
«ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2024» ՄՐՑՈՒՅԹԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մրցույթը

1.1. «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» մրցույթն (այսուհետ՝ **Մրցույթ**) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ **Նախարար**) 2024 թվականի հունիսի 7-ի N 1005-Ա/2 հրամանի:

1.2. **Մրցույթը** կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ **Կոմիտե**)՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով»:

1.3. **Մրցույթն** ուղղված է Հայաստանի Հանրապետության գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող հաստատությունների (այսուհետ՝ **Կազմակերպություն**) ասպիրանտների և հայցորդների մասնագիտական որակավորման բարձրացմանը:

1.4. **Մրցույթն** իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառների մասնագիտություններով (Հավելված N 2.1):

1.5. **Մրցույթին** մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ (այսուհետ՝ **Հայտ**), որը ներառում է գիտական նախագիծ (այսուհետ՝ **Նախագիծ**) և պահանջվող այլ փաստաթղթեր/տվյալներ:

1.6. **Նախագիծը (**Հավելված N 2.2) պետք է նպաստի հայտատուի մասնագիտական աճին:

1.7. **Մրցույթում** միջազգային գիտատեղեկատվական շտեմարանը (այսուհետ՝ **ՄԳՇ**) սահմանվում է Web of Science-ում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social

Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)») ընդգրկված պարբերական, **կամ** «Scimago Journal & Country Ranking» պորտալի առնվազն Q4 քառորդ, իսկ գիտաժողովի նյութերի դեպքում՝ առնվազն Q2 քառորդին համարժեք SJR ինդեքս (SCImago Journal Rank Indicator) ունեցող պարբերական **կամ** Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչությունների կողմից հրատարակված գիտական աշխատություն; իսկ մենագրությունը, կոլեկտիվ մենագրությունը կամ գիտական աշխատությունը (այսուհետ՝ **Մենագրություն**) պետք է ունենա առնվազն 5 տպագրական մամուլ և հրատարակված լինի Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչությունում:

1.8. **Մրցույթի** հրավերի փաթեթը սահմանում է դրան դիմելու ընթացակարգը, չափանիշները, **Հայտերի** գնահատման փուլերը և ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ֆինանսավորման ու հաշվետվողականության ընթացակարգը:

2. Նպատակը

2.1. **Մրցույթի** նպատակներն են.

- ներգրավել երիտասարդ հետազոտողների և ասպիրանտների,
- բարձրացնել գիտության ոլորտում աշխատողների մասնագիտական որակավորումը,
- նպաստել երիտասարդ հետազոտողների ինտեգրմանը միջազգային հետազոտական միջավայրին:

3. Ժամկետները

3.1. **Նախագծի** իրականացման տևողությունը կարող է լինել 36 կամ 24 կամ 12 ամիս:

3.2. **Մրցույթին** առցանց դիմելու վերջնաժամկետը 2024 թվականի օգոստոսի 16-ն է: **Կոմիտեի** հայտերի և հաշվետվությունների ընդունման առցանց համակարգում (grants.hesc.am, այսուհետ՝ **Համակարգ**) **Հայտերի** ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին:

3.3. Թղթային տարբերակով **Կազմակերպության** ներկայացուցչի կողմից **Կոմիտե** ներկայացվող փաստաթղթերի վերջնաժամկետը 2024 թվականի օգոստոսի 23-ն է:

3.4. **Մրցույթի** արդյունքում ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** ֆինանսավորման մեկնարկը նախատեսվում է 2024 թվականի հոկտեմբեր ամսից:

3.5. **Նախագծերի** ֆինանսավորման համար պայմանագրերը կնքվում են **Մրցույթի** արդյունքները հրապարակելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

3.6. Հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետն է ֆինանսավորման մեկնարկից հետո յուրաքանչյուր 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը:

3.7. **Նախագիծն** իրականացվում է պայմանագրում նշված ժամկետներում:

4. Հայտատուն

4.1. **Հայտը** ներկայացնում է **Մրցույթի** մասնակիցը (այսուհետ՝ **Հայտատու**):

4.2. **Հայտատուն** կարող է լինել 1989 թվականի հունվարի 1-ից հետո ծնված՝

- առկա ուսուցման ասպիրանտը,
- հեռակա ուսուցման երկրորդ կամ երրորդ կամ չորրորդ կուրսի ասպիրանտը,
- երկրորդ կամ երրորդ կամ չորրորդ տարվա հայցորդը:

4.3. Սույն հրավերի «**4.2.**» ենթակետում նշված տարիքային շեմը կարող է բարձրանալ՝

- զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդում գտնված լինելու դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար՝ 1 տարով:

4.4. Ֆինանսավորման երաշխավորված **Հայտի Հայտատուն** (այսուհետ՝ **Շահառու**) **Նախագծի** իրականացման ընթացքում պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ ռեզիդենտ, ինչպես նաև բնակվի Հայաստանի Հանրապետությունում:

4.5. **Հայտատուն Մրցույթին** մասնակցում է իր գիտական ղեկավարի հետ համատեղ:

5. Մրցույթի ենթածրագրերն ու պայմանները

5.1. **Հայտատուն** կարող է դիմել գիտության բոլոր բնագավառների մասնագիտություններով (Հավելված N 2.1):

5.2. **Մրցույթն** անցկացվում է երեք ենթածրագրերով.

- առաջին ենթածրագիր՝ տևողությունը 36 ամիս (երեք հաջորդական փուլեր, յուրաքանչյուրը՝ 12 ամիս),
- երկրորդ ենթածրագիր՝ տևողությունը 24 ամիս (երկու հաջորդական փուլեր, յուրաքանչյուրը՝ 12 ամիս),
- երրորդ ենթածրագիր՝ տևողությունը 12 ամիս:

5.3. Առաջին ենթածրագրին կարող է դիմել.

- առկա ուսուցման առաջին կուրսի ասպիրանտը (2024/2025 ուստարվա ընդունելության արդյունքում ընդունված),
- հեռակա ուսուցման երկրորդ կուրսի ասպիրանտը (2023/2024 ուստարում հրամանագրված),
- երկրորդ տարվա հայցորդը (2023 թվականին հրամանագրված):

Առաջին ենթածրագրի **Հայտատուն** պետք է ներկայացնի իր գիտական ղեկավարի՝ վերջին 5 տարիների (2019-2024 թթ.) առնվազն մեկ հրապարակում **ՄԳՇ**-ում:

5.4. Երկրորդ ենթածրագրին կարող է դիմել.

- առկա ուսուցման երկրորդ կուրսի ասպիրանտը (2023/2024 ուստարում հրամանագրված),
- հեռակա ուսուցման երրորդ կուրսի ասպիրանտը (2022/2023 ուստարում հրամանագրված),
- երրորդ տարվա հայցորդը (2022 թվականին հրամանագրված):

Երկրորդ ենթածրագրի **Հայտատուն** պետք է ներկայացնի.

- իր գիտական ղեկավարի՝ վերջին 5 տարիների (2019-2024 թթ.) առնվազն մեկ հրապարակում **ՄԳՇ**-ում,
- անգլերենի իմացությունը հաստատող, անկախ վավերականության ժամկետից, պաշտոնական հավաստագիր՝ «TOEFL» iBT(120)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 79 միավոր կամ «IELTS»(9)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 6.5 միավոր:

5.5. Երրորդ ենթածրագրին կարող է դիմել.

- առկա ուսուցման երրորդ կուրսի ասպիրանտը (2022/2023 ուստարում հրամանագրված),

- հեռակա ուսուցման չորրորդ կուրսի ասպիրանտը (2021/2022 ուստարում հրամանագրված),
- չորրորդ տարվա հայցորդը (2021 թվականին հրամանագրված):

Երրորդ ենթածրագրի **Հայտատուն** պետք է ներկայացնի.

- իր գիտական ղեկավարի՝ վերջին 5 տարիների (2019-2024 թթ.) առնվազն մեկ հրապարակում **ՄԳՇ**-ում,
- անգլերենի իմացությունը հաստատող, անկախ վավերականության ժամկետից, պաշտոնական հավաստագիր՝ «TOEFL» iBT(120)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 79 միավոր կամ «IELTS» (9)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 6.5 միավոր:

5.6. Առաջին ենթածրագրի երկրորդ փուլի՝ հետագա 12-ամսյա ֆինանսավորման համար պարտադիր է անգլերենի իմացությունը հաստատող, անկախ վավերականության ժամկետից, պաշտոնական հավաստագրի («TOEFL» iBT(120)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 79 միավոր կամ «IELTS» (9)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 6.5 միավոր) առկայությունն ընթացիկ հաշվետվության մեջ:

6. Գիտական ղեկավարը

6.1. Գիտական ղեկավարը կարող է լինել ինչպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի, այնպես էլ օտարերկրյա քաղաքացի:

6.2. **Հայտատուի** գիտական ղեկավարը կարող է ներգրավվել և ֆինանսավորվել «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր» մրցույթների ոչ ավելի, քան՝ երեք հայտերում: Յուրաքանչյուր **Հայտի** հաշվարկով, վերջին 5 տարիների (2019-2024 թթ.) կտրվածքով, **Հայտատուի** գիտական ղեկավարը պետք է ներկայացնի առնվազն մեկ հրապարակում **ՄԳՇ**-ում:

6.3. Բեալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված հրապարակում ներկայացնելու դեպքում **Հայտը** գիտական փորձաքննության ենթարկելու հարցը կքննարկվի **Հայտերի** գնահատման փուլում:

7. Կազմակերպությանը ներկայացվող պահանջները

7.1. **Կազմակերպությունը**, **Նախագծի** իրականացման ընթացքում, ապահովում է **Շահառուի** և նրա գիտական ղեկավարի հասանելիությունն առկա ենթակառուցվածքներին և սարքավորումներին:

7.2. **Կազմակերպությունը** աջակցում է **Նախագծի** իրականացմանը:

7.3. **Կազմակերպությունը Հայտատուին** տրամադրում է **Կազմակերպության** գիտական ուղղություններին **Նախագծի** համապատասխանությունը, կարևորությունը և արդիականությունը հիմնավորող՝ **Կազմակերպության** (բուհի ֆակուլտետի) գիտական խորհրդի եզրակացություն:

7.4. **Նախագծի** իրականացման համար անհրաժեշտ սարքերը, նյութերը և ծառայությունները ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

7.5. Ձեռք բերված սարքերն ու սարքավորումները ներառվում են **Կազմակերպության** հաշվեկշռում, տնօրինման իրավունքը պատկանում է **Կազմակերպությանը**՝ հետագայում ևս կանոնադրական նպատակներով օգտագործման (գիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման) համար:

7.6. **Նախագիծը** ֆինանսավորման երաշխավորվելուց հետո **Կոմիտեի**, **Կազմակերպության** և **Շահառուի** միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր (այսուհետ՝ [redacted]

8. Ակնկալվող արդյունքները

8.1. Նախագծի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները հրապարակելիս անհրաժեշտ է որպես աշխատավայր (affiliation) նշել **Կազմակերպությունը**, ինչպես նաև նշել **Կոմիտեի** կողմից ստացված ֆինանսավորման մասին

- The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project № _____).

Ուշադրություն. Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվի Նախագծի իրականացման արդյունք, հետևաբար՝ հաշվի չի առնվի հաշվետվության մեջ:

8.2. Առաջին ենթածրագրով ֆինանսավորվող **Շահառուն** ֆինանսավորման մեկնարկից.

- 12 ամիս հետո պետք է ներկայացնի անգլերենի իմացությունը հաստատող, անկախ վավերականության ժամկետից, պաշտոնական հավաստագիր՝ «TOEFL» iBT(120)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 79 միավոր կամ «IELTS» (9)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 6.5 միավոր,
- 36 ամիս հետո պետք է ներկայացնի մեկ հրապարակում **ՄԳՇ**-ում՝ սույն հրավերի «**8.1.**» ենթակետով սահմանված նշումներով:

8.3. Երկրորդ ենթածրագրով ֆինանսավորվող **Շահառուն** ֆինանսավորման մեկնարկից 24 ամիս հետո պետք է ներկայացնի մեկ հրապարակում **ՄԳՇ**-ում՝ սույն հրավերի «**8.1.**»ենթակետով սահմանված նշումներով:

8.4. Երրորդ ենթածրագրով ֆինանսավորվող **Շահառուն** ֆինանսավորման մեկնարկից 12 ամիս հետո պետք է ներկայացնի մեկ հրապարակում **ՄԳՇ**-ում՝ սույն հրավերի «**8.1.**»ենթակետով սահմանված նշումներով:

8.5. Սույն հրավերի «**8.2.**» ենթակետի պահանջով անգլերենի իմացությունը հաստատող հավաստագիրը չներկայացնելու դեպքում **Նախագծի** ֆինանսավորումը կդադարեցվի: Ֆինանսավորման վերականգնումը **Կոմիտեում** կարող է քննարկվել (եռամսյակային պարբերականությամբ) նշված պահանջը բավարարելու մասին ներկայացված տեղեկատվության հիման վրա:

8.6. **Նախագծի** իրականացման ընթացքում **Շահառուն** և նրա գիտական ղեկավարը պետք է ապահովեն **Նախագծի** կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և հանրայնացում (հարցազրույցներ, հրապարակումներ գիտահանրամատչելի ամսագրերում, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի կառնվեն ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:

8.7. Սույն հրավերի «**8.2.**», «**8.3.**» և «**8.4.**» ենթակետերով նշված պայմանները չկատարելը/կատարելը կանդրադառնա **Կոմիտեի** կողմից հետագայում հայտարարվող մրցույթներում **Շահառուի** և նրա գիտական ղեկավարի ընդգրկմամբ հայտի գնահատականի վրա՝ դրանից հանելով/գումարելով տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 5 տոկոսի չափով միավոր՝ **Շահառուի** ընդգրկված լինելու դեպքում և 1 տոկոսի չափով միավոր՝ նրա գիտական ղեկավարի ընդգրկված լինելու դեպքում: Հանրագումարում կհանվի/կգումարվի տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի ոչ ավելի, քան 5 տոկոսի չափով միավոր: Հետագա մրցույթներին ներկայացվելիք հայտի գնահատականի նվազեցումը կչեղարկվի՝ սույն հրավերի «**8.2.**», «**8.3.**» և «**8.4.**» ենթակետերով նախատեսված պայմանները բավարարելու մասին **Կոմիտե** ներկայացված տեղեկատվության հիման վրա:

II. ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

9. Հայտ և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելը

9.1. **Հայտը** լրացնում և ներկայացնում է **Հայտատուն՝ Համակարգի** (grants.hesc.am) միջոցով: **Հայտի** ուղարկման վերջնաժամկետը 2024 թվականի օգոստոսի 16-ն է (**Հայտերի** ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

9.2. **Համակարգի** միջոցով **Հայտն** ուղարկելուց հետո **Հայտատուն** թղթային տարբերակով **Կազմակերպություն** է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի փաթեթը.

- **Համակարգում** ձևավորված և ծածկագիր ստացած **Հայտի** տիտղոսաթերթը, ծախսերի նախահաշիվը (այսուհետ՝ **Նախահաշիվ**), ինչպես նաև **Համակարգում** ինքնաշխատ եղանակով կազմված **Հայտատուի** դիմումը,
- գիտական խորհրդի համապատասխան եզրակացությունը (Board Conclusion),
- տեղեկանք **Կազմակերպության** ասպիրանտ հանդիսանալու մասին, որտեղ նշված է ուսուցման ձևը (առկա կամ հեռակա), ուսուցման տարին,
- տեղեկանք **Կազմակերպությունում** հայցորդ ձևակերպված լինելու մասին, որտեղ նշված է հրամանագրման տարեթիվը,

- օտար լեզվի իմացությունը հաստատող պաշտոնական հավաստագիրը (երկրորդ կամ երրորդ ենթածրագրին դիմելու դեպքում),
- տարիքային շեմը բարձրացնելու համար՝ զինվորական գրքույկի պատճենը կամ երեխայի խնամքի արձակուրդի մասին համապատասխան փաստաթղթի պատճենը:

9.3. Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել այլ փաստաթղթեր:

9.4. **Կազմակերպության** ներկայացուցիչը (գիտական քարտուղար կամ այլ պատասխանատու անձ) մինչև 2024 թվականի օգոստոսի 23-ը ներառյալ, մեկ ընդհանուր փաթեթով, **Կազմակերպության** ղեկավարի գրությամբ (***Հավելված N 2.3***), աշխատանքային ժամերին **Կոմիտե** է ներկայացնում **Կազմակերպության** կողմից ներկայացված բոլոր **Հայտերի** փաթեթները՝ առձեռն (Օրբելի եղբայրների փողոց 22, 7-րդ հարկ, 708 սենյակ):

9.5. **Մրցույթի** վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և խորհրդատվություն կարելի է ստանալ **Կոմիտեից**, հեռախոս՝ (010) 210140 (ներքին 113), էլեկտրոնային փոստ՝ scexpert@hesc.am:

Ուշադրություն. Կոմիտեն քննարկման է ընդունում միայն Համակարգի կողմից ձևավորված և ծածկագիր ստացած Հայտերը: Հայտերը, որոնք չեն ուղարկվել վերը նշված ընթացակարգի և ժամկետների համաձայն, չունեն ծածկագիր, քննարկման ենթակա չեն:

10. Նախահաշվի կազմությունը

10.1. **Նախահաշիվը** կազմված է «Աշխատանքի վարձատրություն» և «Այլ ծախսեր» հոդվածներից: «Այլ ծախսեր» հոդվածը բաղկացած է «Սարքեր, նյութեր և ծառայություններ» և «Գործուղումներ» ենթահոդվածներից:

10.2. **Նախագծի** 12-ամսյա ֆինանսավորման առավելագույն չափը 3,200.0 հազար (երեք միլիոն երկու հարյուր հազար) դրամ է:

10.3. **Նախահաշվի** «Աշխատանքի վարձատրություն» հոդվածում **Հայտատուի** աշխատանքի ամսական վարձատրության չափն ընդունել մինչև 150.0 հազար (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ՝ ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները:

10.4. **Հայտատուի** գիտական ղեկավարի համար «Աշխատանքի վարձատրություն» հոդվածում կարող է նախատեսել վարձատրություն՝ 12 ամսվա կտրվածքով մինչև

600.0 հազար (վեց հարյուր հազար) դրամ՝ ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները:

10.5. Աշխատանքի վարձատրության գումարը սույն հրավերի «**10.3.**» և «**10.4.**» ենթակետերում նշվածից պակաս նախատեսելու դեպքում տարբերությունը կարող է օգտագործվել **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածում:

10.6. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» և «Գործուղումներ» ենթահոդվածներով 12 ամսվա համար կարելի է նախատեսել 800.0 հազար (ութ հարյուր հազար) դրամ: Այս գումարը կարող է ավելանալ սույն հրավերի «**10.5.**» ենթակետում նշված տարբերության չափով:

10.7. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի կամ ծառայությունների ձեռքբերման ծախսեր: Ծառայությունների մատուցման պայմանագիր կարող է կնքվել միայն իրավաբանական անձանց հետ՝ նախապես համաձայնեցնելով **Կոմիտեի** հետ:

10.8. Գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերումը չի կարող նախատեսվել **Նախագծի** իրականացման վերջին տարում:

10.9. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել **Նախագծի** իրականացման, ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով միջազգային գիտաժողովներին **Շահառուի** մասնակցության համար:

10.10. Գործուղումների օրապահիկը և գիշերավարձը հաշվարկելիս անհրաժեշտ է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ:

10.11. **Նախահաշվի** բոլոր ենթահոդվածների ծախսերը պետք է հիմնավորել **Նախահաշվի** մեկնաբանության մեջ:

10.12. **Հայտի** քննարկման ընթացքում **Նախահաշվի** հիմնավորվածությունը և բաշխումը կարող են լրամշակվել **Շահառուի** համաձայնությամբ:

III. ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

11. Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին

11.1. **Կոմիտեն** ստուգում է.

- **Հայտերի** համապատասխանությունը **Մրցույթի** հրավերի պայմաններին,
- Բեալի ցանկերում *(Beall's list, https://beallslist.net/)* ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում և պարբերականներում հրատարակված հրապարակումների առկայությունը **Հայտում**:

11.2. **Հայտը չի քննարկվում, եթե՝**

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- չի բավարարում **Մրցույթի** հրավերի պայմաններին,
- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ այլ նախագծի հետ,
- **Հայտատուի** կողմից նախկինում իրականացված նախագծի վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ մասնագիտական փորձագիտական խորհրդի կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- **Հայտատուն** միաժամանակ ֆինանսավորվում է այլ նմանատիպ մրցույթի արդյունքում:

11.3. Ստուգման արդյունքները տրամադրվում են **Հայտերի** գնահատման նպատակով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդին (այսուհետ՝ **Խորհուրդ**):

11.4. **Խորհուրդը** քննարկում և հաստատում է գիտական փորձաքննության ենթակա **Հայտերի** ցանկը:

12. Գիտական փորձաքննությունը

12.1. **Խորհուրդը Կոմիտեի** հետ համատեղ մշակում ու հաստատում է **Հայտերի** գիտական փորձաքննության գնահատման թերթիկը:

12.2. **Կոմիտեի, Խորհրդի** և փորձագետների կողմից **Հայտի** բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և

գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

13. Գիտական փորձաքննությունը

13.1. Գիտական փորձաքննության ժամանակ **Խորհուրդը** գնահատում է **Հայտը՝** հաշվի առնելով.

- **Նախագծի** գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, իրականացման նախադրյալները,
- աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների և **Նախահաշվի** հիմնավորվածությունը,
- գիտության տվյալ բնագավառի (մասնագիտության) առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

13.2. Մասնագիտական կարծիք ստանալու համար **Խորհուրդը** կարող է ներգրավել տվյալ մասնագիտության փորձագետ:

13.3. **Խորհուրդը Հայտատուներին** կարող է հրավիրել հարցազրույցի:

13.4. Յուրաքանչյուր **Հայտի** համար **Խորհուրդը** լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկ:

14. Գնահատման արդյունքները

14.1. Գիտական փորձաքննության ավարտից հետո **Հայտերի** գիտական փորձաքննության գնահատականների նվազման կարգով, ըստ գիտության բնագավառների (մասնագիտությունների), **Կոմիտեն** ձևավորում է վարկանիշային ցանկեր ու ներկայացնում **Խորհրդին**՝ քննարկման:

14.2. **Խորհուրդը** հաստատում է **Հայտերի** գնահատականների վարկանիշային ցանկը և առաջարկում գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը:

14.3. **Կոմիտեն**, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային

գնահատականը և **Նախարարի** հաստատմանն է ներկայացնում ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը, **Շահառուների** ցուցակը և յուրաքանչյուր **Նախագծի** իրականացման համար նախատեսվող ֆինանսավորման չափը:

14.4. **Նախարարի** հրամանով հաստատվում է ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը, **Շահառուների** ցուցակը և ֆինանսավորման չափը:

14.5. **Մրցույթի** արդյունքում ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը հրապարակվում է **Կոմիտեի** պաշտոնական կայքում:

14.6. **Կոմիտեն Կազմակերպության** ղեկավարին տրամադրում է տեղեկություններ՝ տվյալ **Կազմակերպությունից Մրցույթի** շահառու **Հայտերի** վերաբերյալ:

14.7. **Կոմիտեն Համակարգի** (grants.hesc.am) միջոցով **Հայտատուներին** տրամադրում է **Հայտի** փորձաքննության արդյունքները և անցողիկ շեմային գնահատականը:

IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. Պայմանագրերի կնքումը

15.1. **Կոմիտեի**, **Կազմակերպության** և **Շահառուի** միջև կնքվում է **Համակարգում** ինքնաշխատ եղանակով կազմված **Պայմանագիր**:

15.2. Ամսական վարձատրությունն ապահովելու համար, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում են պայմանագրեր.

- **Կազմակերպության** և **Շահառուի** միջև,
- **Կազմակերպության** և **Շահառուի** գիտական ղեկավարի միջև:

Վերոնշյալ պայմանագրերի պատճենները **Կազմակերպության** ներկայացուցիչը (գիտական քարտուղար կամ այլ պատասխանատու անձ) ներկայացնում է **Կոմիտե:**

15.3. **Պայմանագրերը** կնքվում են **Մրցույթի** արդյունքները հրապարակելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

15.4. **Նախագծերը** իրականացվում են **Պայմանագրում** նշված ժամկետներում:

16. Հաշվետվությունը

16.1. **Նախագծի** իրականացման ընթացքում, ֆինանսավորման մեկնարկից հետո յուրաքանչյուր 12-րդ ամսվա մինչև վերջին աշխատանքային օրը, **Շահառուն Համակարգի** (grants.hesc.am) միջոցով **Կոմիտե** է ներկայացնում հաշվետվություն

(ընթացիկ/ամփոփիչ), որի հիման վրա **Խորհուրդը** տալիս է եզրակացություն՝ **Նախագծի** ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության կամ ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին:

16.2. Առաջին ենթածրագրով ֆինանսավորվող **Շահառուն** առաջին ընթացիկ հաշվետվությունում՝ ֆինանսավորման մեկնարկից 12 ամիս հետո, պետք է ներկայացնի անգլերենի իմացությունը հաստատող հավաստագիր, որի չներկայացնելու դեպքում **Նախագծի** ֆինանսավորումը կդադարեցվի: Ֆինանսավորման վերականգնումը **Կոմիտեում** կարող է քննարկվել (եռամսյակային պարբերականությամբ) նշված պահանջը բավարարելու մասին ներկայացված տեղեկատվության հիման վրա:

16.3. Գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության գնահատման նպատակով, սահմանված կարգով, **Կոմիտեն** կարող է իրականացնել **Նախագծի** ընթացիկ մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել **Խորհրդին**:

16.4. **Նախագծի** ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս՝ **Խորհուրդը** պետք է հաշվի առնի նաև **Կոմիտեի** իրականացրած մշտադիտարկման արդյունքները:

16.5. Ընթացիկ հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում **Նախագծի** հետագա ֆինանսավորումը կարող է դադարեցվել:

16.6. **Կոմիտեն** կարող է ֆինանսավորման երաշխավորված **Նախագծի** անոտացիան և հաշվետվությունները հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

17. Լրացուցիչ տեղեկություններ

17.1. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող հայտ և այնուհետև հաշվետվություն ներկայացնելու դեպքում պետք է առաջնորդվել «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

17.2. **Շահառուն** կարող է դիմել **Կոմիտե Պայմանագրի** նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի ենթահոդվածներով տվյալ տարվա համար նախատեսված ծախսերի

վերաբաշխում կատարելու միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան ձևաթղթով հիմնավորում և ստանալով **Կոմիտեի** գրավոր համաձայնությունը: Վերաբաշխում կատարելու դեպքում **Կոմիտե** է ներկայացվում **Պայմանագրի** նախահաշվի փոփոխված տարբերակը:

17.3. Գիտական ղեկավարի փոփոխության դեպքում, ստանալով **Կոմիտեի** գրավոր համաձայնությունը, կնքվում է **Պայմանագրի** անբաժանելի մաս կազմող համաձայնագիր, որով նոր գիտական ղեկավարը պարտավորվում է **Նախագիծը** իրականացնել համաձայն **Պայմանագրի**:

17.4. **Շահառուի** Հայաստանի Հանրապետությունից երկու և ավելի ամիս բացակայությունը պետք է գրավոր համաձայնեցնել **Կոմիտեի** հետ:

18. Նախագծի ֆինանսավորման դադարեցումը

18.1. **Կոմիտեն** կարող է դադարեցնել **Նախագծի** ֆինանսավորումը, եթե.

- չեն բավարարվել հաջորդ ենթածրագրի նվազագույն պայմանները կամ ընթացիկ հաշվետվությանը կից չեն ներկայացվել համապատասխան փաստաթղթերը,
- սահմանված ժամկետում չի ներկայացվել ընթացիկ հաշվետվություն կամ վերջինիս վերաբերյալ **Խորհրդի** կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածում կատարվել է վերաբաշխում,
- առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության **Հայտատուն** երկու և ավելի ամիս բացակայել է Հայաստանի Հանրապետությունից:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Մաթեմատիկա

1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ

1.3. Ֆիզիկա և աստղագիտություն

1.4. Քիմիա

1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ

1.6. Կենսաբանական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն

2.2. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ

2.3. Մեխանիկա

2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն

2.5. Քիմիական տեխնոլոգիաներ

2.6. Նյութագիտություն

2.7. Բժշկական սարքաշինություն

2.8. Էկոլոգիա

2.9. Կենսատեխնոլոգիա

2.10. Նանոտեխնոլոգիա

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ընդհանուր բժշկություն

3.2. Կլինիկական բժշկություն

3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն

4.2. Բուսաբուծություն

4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն

4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Հոգեբանություն

5.2. Տնտեսագիտություն և գործարարություն

5.3. Մանկավարժական գիտություններ

5.4. Սոցիոլոգիա

5.5. Իրավունք

5.6. Քաղաքական գիտություններ

5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն

5.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Պատմություն, հնագիտություն

6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն

6.3. Փիլիսոփայություն, էթիկա

6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն

6.5. Արվեստագիտություն

Հավելված N 2.2
«Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» մրցույթի հրավերի

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

Ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 11 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. համառոտ բնութագիրը (անոտացիա)

2. խնդրի դրվածքը, արդի վիճակը

3. նախագծի նպատակները և խնդիրները

4. հետազոտական ծրագիրը

5. իրականացման եղանակները

6. առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները

7. օրացուցային պլան (ըստ եռամսյակների կամ Գանտի աղյուսակ)

8. միջազգային համագործակցության նախադրյալները և նպատակահարմարությունը

9. տվյալ ուղղությամբ ունեցած ձեռքբերումները

10. ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները (գիտական հոդվածներ, գիտաժողովների նյութեր և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն), միջազգային համագործակցային կապերի ամրապնդում, համագործակցության հեռանկարներ)

11. օգտագործված գրականության ցանկը

*Հավելված N 2.3**
«Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» մրցույթի հրավերի

N _____ «____» _____ 2024 թ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հայոցյան,

Խնդրում եմ ընդունել «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» մրցույթին __(Կազմակերպության անվանում)_ից ներկայացված _____ ծածկագր(եր)ով հայտ(եր)ը:

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

* *Հավելված N 2.3-ով առաջարկվող տեքստը ներկայացնել Կազմակերպության ձևաթղթով:*